Որոշակի ժամկետով կամ ժամանակավոր աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողների՝ աշխատավայրում անվտանգության և առողջության հետ կապված բարելավումների խրախուսմանն ուղղված միջոցառումները լրացնող՝ ԽՈՐՀՐԴԻ 1991 թվականի հունիսի 25–ի (91/383/ԵՏՀ) ՀՐԱՀԱՆԳ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը, և, մասնավորապես, դրա 118ա հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

համագործակցելով Եվրոպական պառլամենտի հետ (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

քանի որ Պայմանագրի 118ա հոդվածով նախատեսվում է, որ Խորհուրդը հրահանգների միջոցով պետք է սահմանի հատկապես աշխատանքային միջավայրի բարելավումների խրախուսմանն ուղղված նվազագույն պահանջներ՝ աշխատողների անվտանգության և առողջության պահպանության ավելի բարձր մակարդակ երաշխավորելու նպատակով,

քանի որ, համաձայն նշված հոդվածի, նման հրահանգներով պետք է խուսափել վարչական, ֆինանսական և իրավական այնպիսի սահմանափակումներ սահմանելուց, որոնք հետ կպահեն փոքր ու միջին ձեռնարկություններն ստեղծելուց ու զարգացնելուց,

քանի որ աշխատանքի այնպիսի ձևերին դիմելու դեպքերը, ինչպիսիք որոշակի ժամկետով և ժամանակավոր աշխատանքն են, զգալիորեն ավելացել են,

քանի որ հետազոտությունը ցույց է տվել, որ, ընդհանրապես, որոշակի ժամկետով կամ ժամանակավոր աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող՝ որոշակի բնագավառների աշխատողներն առավել շատ են ենթարկվում վթարների և մասնագիտական հիվանդությունների ռիսկին, քան մյուս աշխատողները,

քանի որ որոշակի բնագավառներում այդ լրացուցիչ ռիսկերը մասնակիորեն կապված են ձեռնարկությունում նոր աշխատողներ ներգրավելու որոշակի հատուկ ձևերի հետ, քանի որ այս ռիսկերը կարող են նվազեցվել՝ աշխատանքի հենց սկզբից համապատասխան տեղեկություններ տրամադրելու և վերապատրաստման միջոցով,

քանի որ աշխատավայրում առողջության և անվտանգության վերաբերյալ հրահանգները, մասնավորապես՝ «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության հետ կապված բարելավումների խրախուսմանն ուղղված միջոցառումների ներմուծման մասին» Խորհրդի 1989 թվականի հունիսի 12–ի 89/391/ԵՏՀ հրահանգը (4), պարունակում են դրույթներ՝ ուղղված ընդհանրապես աշխատողների անվտանգության և առողջության բարելավմանը,

քանի որ որոշակի ժամկետով կամ ժամանակավոր աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողների հատուկ դրության և որոշակի բնագավառներում նրանց սպառնացող ռիսկերի հատուկ բնույթի համար պահանջվում է սահմանել լրացուցիչ հատուկ կանոններ, մասնավորապես՝ տվյալ աշխատողներին տեղեկատվությամբ, վերապատրաստմամբ և բժշկական հսկողությամբ ապահովելու մասով,

և քանի որ սույն Հրահանգով ներքին շուկայի սոցիալական ուղղվածության ձևավորման շրջանակներում գործնական քայլ է կատարվում,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԲԱԺԻՆ I

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Հոդված 1

Գործողության ոլորտը

Սույն Հրահանգը կիրառվում է հետևյալի նկատմամբ.

1. աշխատանքային հարաբերություններ, որոնք կարգավորվում են ուղղակիորեն գործատուի և աշխատողի միջև կնքված որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրով, որի դեպքում պայմանագրի ժամկետի ավարտը որոշվում է օբյեկտիվ այնպիսի պայմաններով, ինչպիսիք կոնկրետ ամսաթվի լրանալը, հատուկ հանձնարարության կատարումն են կամ որոշակի իրադարձության վրա հասնելը,

2. ժամանակավոր աշխատանքային հարաբերություններ ժամանակավոր աշխատանք տրամադրողի՝ գործատուի և աշխատողի միջև, որի դեպքում վերջինիս հանձնարարված է

աշխատել իր ծառայություններից օգտվող ձեռնարկության և (կամ) հաստատության համար ու դրա հսկողության տակ:

Հոդված 2

Կարգավորման առարկան

1. Սույն Հրահանգի նպատակը 1–ին հոդվածում նշված՝ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողներին տրամադրվող՝ աշխատավայրում անվտանգության ու առողջության պահպանության միևնույն մակարդակն ապահովելն է, ինչպիսին ապահովվում է այլ աշխատողների համար ծառայություններից օգտվող ձեռնարկությունում և (կամ) հաստատությունում:

2. 1–ին հոդվածով նախատեսված աշխատանքային հարաբերությունների առկայությունը աշխատանքային պայմանների մասով այլ վերաբերմունք չի արդարացնում, եթե չի առնչվում աշխատավայրում անվտանգության ու առողջության պահպանման հետ, հատկապես՝ անհատական պաշտպանական միջոցների հետ:

3. 89/391/ԵՏՀ հրահանգը և այն առանձին հրահանգները դրա 16(1)հոդված ի իմաստով ամբողջությամբ կիրառվում են 1–ին հոդվածով նախատեսված աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողների նկատմամբ՝ չհակասելով սույն Հրահանգով սահմանված՝ առավել պարտադիր բնույթի և (կամ) առավել մանրամասն դրույթներին:

ԲԱԺԻՆ II

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 3

Աշխատողներին տեղեկությունների տրամադրումը

Չհակասելով 89/391/ԵՏՀ հրահանգի 10–րդ հոդվածին՝ անդամ պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ քայլեր, որպեսզի. 1. 1–ին հոդվածով նախատեսված աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողը՝ մինչև որևէ գործողություն

կատարելը, իր ծառայություններից օգտվող ձեռնարկության և (կամ) հաստատության կողմից տեղեկացվում է հավանական ռիսկերի մասին,

2. այդպիսի տեղեկությունները՝

- մասնավորապես վերաբերում են պահանջվող մասնագիտական հատուկ որակավորմանը կամ հմտություններին կամ ազգային օրենսդրությամբ սահմանված հատուկ բժշկական հսկողությանը, ինչպես նաև

- հստակորեն նշում են ազգային օրենսդրությամբ սահմանված՝ ավելացված հատուկ որևէ ռիսկ, որը կարող է առաջացնել աշխատանքը:

Հոդված 4

Աշխատողների վերապատրաստումը

Չհակասելով 89/391/ԵՏՀ հրահանգի 12-րդ հոդվածին՝ անդամ պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ 3-րդ հոդվածում նշված դեպքերում յուրաքանչյուր աշխատող ստանա բավարար վերապատրաստում, որը կհամապատասխանի աշխատանքի որոշակի առանձնահատկություններին՝ հաշվի առնելով նրա որակավորումը և փորձը:

Հոդված 5

Աշխատողի ծառայություններից օգտվելը և աշխատողների բժշկական հսկողությունը

1. Անդամ պետությունները հնարավորություն ունեն արգելելու 1–ին հոդվածով նախատեսված՝աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողներին կատարել ազգային օրենսդրությամբ նախատեսված որոշակի աշխատանք, որը կարող է առանձնահատուկ վտանգ ներկայացնել իրենց անվտանգությանը կամ առողջությանը, և մասնավորապես, այնպիսի աշխատանք, որն ազգային օրենսդրությամբ սահմանված հատուկ բժշկական հսկողություն է պահանջում:

2. Եթե անդամ պետությունները չեն օգտվում 1–ին պարբերությամբ նախատեսված հնարավորությունից, ապա նրանք, չհակասելով 89/391/ԵՏՀ հրահանգի 14-րդ հոդվածին, ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ համապատասխան հատուկ

բժշկական հսկողություն տրամադրվի 1–ին հոդվածով նախատեսված՝ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող այն աշխատողներին, որոնք ազգային օրենսդրությամբ սահմանված հատուկ բժշկական հսկողություն պահանջող աշխատանք են կատարում:

3. Անդամ պետություններն ազատ են որոշելու, թե արդյոք 2-րդ հոդվածով նախատեսված համապատասխան հատուկ բժշկական հսկողությունը պետք է շարունակվի տվյալ աշխատողի աշխատանքային հարաբերությունների ավարտից հետո:

Հոդված 6

Պաշտպանության և կանխարգելման ծառայությունները

Անդամ պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու համար, որ աշխատողները, ծառայողները կամ այն անձինք, ովքեր նախատեսված են 89/391/ԵՏՀ հրահանգի 7–րդ հոդվածի համաձայն իրականացնելու՝ մասնագիտական ռիսկերից պաշտպանվելու և դրանք կանխարգելելու հետ կապված աշխատանքներ, տեղեկացված լինեն 1–ին հոդվածում նշված՝ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողների հանձնարարության մասին այնքանով, որքանով անհրաժեշտ է, որ աշխատողները, ծառայությունները կամ նախատեսված անձինք ի վիճակի լինեն ձեռնարկության և (կամ) հաստատության բոլոր աշխատողների համար համարժեք ձևով իրականացնելու պաշտպանության և կանխարգելման իրենց աշխատանքները:

ԲԱԺԻՆ III

ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 7

Ժամանակավոր աշխատանքային հարաբերությունները. տեղեկատվությունը

Չհակասելով 3–րդ հոդվածին՝ անդամ պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ քայլեր՝ ապահովելու, որ.

1. նախքան 1(2) հոդվածով նախատեսված աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողներով ապահովելը, ծառայություններից օգտվող ձեռնարկությունը և

(կամ) հաստատությունը ժամանակավոր աշխատանք տրամադրող կազմակերպությանը, բացի դրանից, պետք է ներկայացնի պահանջվող մասնագիտական որակավորումը և լրացվելիք թափուր աշխատատեղի առանձնահատկությունները,

2. ժամանակավոր աշխատանք տրամադրող կազմակերպությունն այդ բոլոր փաստերը պետք է ներկայացնի տվյալ աշխատողների ուշադրությանը:

Անդամ պետությունները կարող են ապահովել, որ ծառայություններից օգտվող ձեռնարկության և (կամ) հաստատության կողմից ժամանակավոր աշխատանք տրամադրող կազմակերպությանն առաջին ենթապարբերության 1–ին կետի համաձայն տրամադրվելիք մանրամասները տեղ գտնեն հանձնարարության պայմանագրում:

Հոդված 8

Ժամանակավոր աշխատանքային հարաբերությունները. պատասխանատվությունը

Անդամ պետությունները պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն՝ ապահովելու, որ.

1. չհակասելով ժամանակավոր աշխատանք տրամադրող կազմակերպության՝ ազգային օրենսդրությամբ սահմանված պատասխանատվությանը, ծառայություններից օգտվող ձեռնարկությունը և (կամ) հաստատությունը պատասխանատու լինի (լինեն) հանձնարարության տևողության, աշխատանքի կատարումը կարգավորող պայմանների համար,

2. 1–ին կետի կիրառման նպատակով աշխատանքի կատարումը կարգավորող պայմանները սահմանափակվեն՝ աշխատավայրում անվտանգությանը, հիգիենային և առողջությանը վերաբերող պայմաններով:

ԲԱԺԻՆ IV

ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 9

Առավել նպաստավոր դրույթները

Սույն Հրահանգը չպետք է հակասի ազգային կամ համայնքային գործող կամ հետագա դրույթներին, որոնք առավել նպաստավոր են 1–ին հոդվածով նախատեսված՝

աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողների անվտանգության ու առողջության պահպանման համար:

Հոդված 10

Եզրափակիչ դրույթներ

1. Անդամ պետությունները սույն Հրահանգին համապատասխանելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը պետք է գործողության մեջ դնեն ամենաուշը մինչև 1992 թվականի դեկտեմբերի 31-ը: Նրանք դրա մասին պետք է անմիջապես տեղեկացնեն Հանձնաժողովին:

Անդամ պետությունների կողմից այդ ակտերն ընդունելու դեպքում, վերջիններս պետք է սույն Հրահանգին հղում պարունակեն կամ զուգորդվեն նման հղումով դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու եղանակները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ուղարկում ազգային իրավունքի դրույթների տեքստերը, որոնք սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում արդեն ընդունվել կամ ընդունվում են նրանց կողմից:

3. Անդամ պետությունները յուրաքանչյուր հինգ տարին մեկ սույն Հրահանգի գործնական կիրարկման վերաբերյալ հաշվետվություն են տրամադրում Հանձնաժողովին՝ ներկայացնելով գործատուների և աշխատողների տեսակետները:

Հանձնաժողովն այս հաշվետվությունը ներկայացնում է Եվրոպական պառլամենտի, Խորհրդի, Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի ու Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեի ուշադրությանը:

4. Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ, Խորհուրդ ու Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտե սույն Հրահանգի կիրարկման վերաբերյալ պարբերաբար զեկույց է ներկայացնում՝ պատշաճ ուշադրություն դարձնելով 1–ին, 2–րդ և 3–րդ պարբերություններին:

Հոդված 11

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին: